

**Գյուղատնտեսական նշանակության հողերը որպես
չօգտագործվող հողեր դասակարգելու
չափանիշները եվ դրանց հաշվառման կարգը
սահմանելու մասին**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2022 թվականի N _____ Ն

**Գյուղատնտեսական նշանակության հողերը որպես չօգտագործվող հողեր
դասակարգելու չափանիշները եվ դրանց հաշվառման կարգը
սահմանելու մասին**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել՝

- գյուղատնտեսական նշանակության հողերը որպես չօգտագործվող հողեր դասակարգելու չափանիշները՝ համաձայն N 1 հավելվածի,
- չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվառման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

**2. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածով սահմանվում են
գյուղատնտեսական նշանակության հողերից միայն վարելահողերը և
բազմամյա տնկարկները որպես չօգտագործվող հողեր դասակարգելու
չափանիշները:**

**3. ՀՀ Էկոնոմիկայի նախարարին՝ հաշվի առնելով սույն որոշման
կիրարկման արդյունքները, մինչև 2024 թվականի 4-րդ եռամսյակի
ավարտը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել սույն
որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ նախատեսող ՀՀ**

կառավարության որոշման նախագիծ, որով կսահմանվեն գյուղատնտեսական նշանակության հողերից խոտհարքները և արոտավայրերը որպես չօգտագործվող հողեր դասակարգելու չափանիշները:

4. ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված կարգի պահանջներն ապահովելու նպատակով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 20-օրյա ժամկետում Կադաստրի կոմիտեի կողմից վարվող ազգային գեոպորտալի քարտեզագրական էլեկտրոնային համակարգում ապահովել ՀՀ էկոնոմիկայի նախարարության հասանելիությունը:
5. Սահմանել, որ սույն որոշման հիման վրա գյուղատնտեսական նշանակության հողերը որպես չօգտագործվող հողեր դասակարգելու և հաշվառելու գործընթացը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի հունվարի 1-ն իրականացվում է փորձնական սկզբունքով, և սույն կետում նշված ժամանակահատվածը հաշվանցվում է հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված ժամկետից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ՝

Ն.

ՓԱՇԻՆՅԱՆ